ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՎԵՐ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ

(«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը»)

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹԻ

1. Սույն մրցույթի հրավերը տրամադրվում է ի լրումն մրցույթի մասին ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային www.mineconomy.am կայքում տեղադրված հայտարարության:
2. Կազմակերպությունը, որին հատկացվում է դրամաշնորհ, որոշվում է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշման համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի արդյունքներով:
3. Սույն մրցույթն անցկացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի փետրվարի 5-ի Զբոսաշրջության զարգացման «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2021 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N104-Ա հրամանի N2 հավելվածով նախատեսված հետևյալ միջոցառումների իրականացման համար կազմակերպությունների ընտրության նպատակով՝
   1) **Պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոներ կազմակերպող կազմակերպություններին (պետական բյուջեից հատկացվող գումարը մինչև** 2074,0 **հազար դրամ, առանց ԱԱՀ),**
   2) **Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացներին (պետական բյուջեից հատկացվող գումարը մինչև 1400,0 հազար դրամ, առանց ԱԱՀ),**
   3) **«Միջազգային համագործակցություն» միջոցառման շրջանակներում Հայաստանում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում կամ աջակցություն, միջազգային միջոցառումների, հանդիպումների, ընդունելությունների իրականացում կամ մասնակցության ապահովում (պետական բյուջեից հատկացվող գումարը մինչև 11994,8 հազար դրամ, առանց ԱԱՀ):**

4. Մասնակիցը չի կարող նույն մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:
5. Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն կազմակերպությունները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են պետական բյուջեից

դրամաշնորհ ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

6. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է հավելված 1-ով սահմանված ձևի **հայտ: Հայտին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև տեղեկատվություն ըստ** սույն հրավերի 7-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր միջոցառմանը ներկայացված պահանջների:
7. Սույն հրավերի 3-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր միջոցառման համար մրցույթին դիմելու մանրամասները տեղադրված է համապատասխանաբար՝

7.1 սույն հրավերի 3-րդ կետի 2)-րդ ենթակետով նախատեսված «***Պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոներ կազմակերպող կազմակերպություններին***» միջոցառման իրականացման համար՝ հավելված 5-ում

7.2 սույն հրավերի 3-րդ կետի 3)-րդ ենթակետով նախատեսված «**Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացին»** միջոցառման իրականացման համար՝ հավելված 6- ում

7.3 սույն հրավերի 3-րդ կետի 4)-րդ ենթակետով նախատեսված **«Միջազգային համագործակցություն» միջոցառման շրջանակներում Հայաստանում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում կամ աջակցություն, միջազգային միջոցառումների, հանդիպումների, ընդունելությունների իրականացում կամ մասնակցության ապահովում»** միջոցառման իրականացման համար՝ հավելված 7- ում:

8. Բացի սույն հրավերի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերի հայտատուն իր հայեցողությամբ կարող է ներկայացնել այլ փաստաթղթեր, նյութեր, այդ թվում նաև տեղեկատվություն համաֆինանսավորման հնարավորության վերաբերյալ:
9. Հայտը ներկայացվում է **հայերեն լեզվով՝ փակ, սոսնձված և ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և թվով հինգ կրկնօրինակ փաթեթներից**, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:
10. Ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝
    1) պետական մարմնի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).
    2) մրցույթի ծածկագիրը.
    3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.
    4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:
11. Հայտը ներկայացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն հետևյալ հասեով՝ ք. Երևան, Միհեր Մկրտչյան 5, 7-րդ հարկ, 709 սենյակ՝ մինչև **2021 թվականի օգոստոսի 25-ը, ժամը 12:00-ն:**
12. Հայտերը գրանցվում են առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը: Հայտատուին տրվում է հայտն ընդունելու մասին տեղեկանք:
13. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի

անդամների առնվազն երկու երրորդը, և հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի (այսուհետ՝ նիստը վարող) ձայնը վճռորոշ է:

14. Հանձնաժողովի նիստերն տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում հանձնաժողովը հաստատում է այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը պետք է պարունակի նաև տեղեկություններ հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:
15. Հայտատուները՝ մրցույթի մասնակիցները կարող են պահանջել և երկու աշխատանքային օրվա ընթացքում ստանալ իր հայտի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
16. Դրամաշնորհային ծրագիրը մասնակցի կողմից համաֆինանսավորման եղանակով իրականացնելու առաջարկության դեպքում նախապատվությունը տրվում է համաֆինանսավորման առավել բարձր չափաբաժին նախատեսած մասնակցին:
17. Սույն մրցույթի շրջանակներում առանձին չափաբաժիններով հայտերի ներկայացում չի նախատեսվում:
18. Հայտատուները՝ մրցույթի մասնակիցները կարող են հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն տասը օրացուցային օր առաջ հանձնաժողովից գրավոր պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում:
19. Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ, քան յոթ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, Հրավերում փոփոխություն կատարվելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու մասին հայտարարությունը և փոփոխված հրավերը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:
20. Մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու դեպքում հայտեր ներկայացնելու ժամկետի ավարտը հաշվվում է այդ փոփոխությունների մասին www.mineconomy.am կայքում հրապարակվելու օրվանից:
21. Սույն հրավերի համաձայն մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեն չի կրում մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու հանգամանքով պայմանավորված մասնակցի կողմից կրած վնասի ռիսկը:
22. Սույն հրավերի պահանջներին ոչ համապատասխան ներկայացված հայտերը, ինչպես նաև հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում դրանք ներկայացնողներին:
23. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը: Հայտը փոփոխվում է սույն հրավերով հայտ ներկայացնելու համար սահմանված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

24. Հայտերը բացվելու են **2021թ օգոստոսի 25-ին, ժամը 15:00-ին** մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստում:
25. Հանձնաժողովի նիստերը դռնփակ են:
26. Հայտերի բացման նիստում՝
    1) Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողը հայտարարում է նիստը բացված,
    2) Հանձնաժողովի քարտուղարը՝
       ա. տեղեկատվություն է ներկայացնում հայտերի մասին,
       բ. բացում է հայտերի ծրարները և դրանց լրակազմը ստուգելուց հետո ծրարում ներկայացված փաստաթղթերի մեկական օրինակ հանձնում Հանձնաժողովի անդամներին, նախագահողին է փոխանցում մրցույթի մասին հայտերը,
       գ. հանձնաժողովի անդամներին է տրամադրում ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կնիքով կնքված հայտերի գնահատման թերթիկների երկուական օրինակ՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո,
    3) ներկայացված հայտերը մերժվում են լրակազմ չլինելու դեպքում:
27. Հայտերի բացման նիստին չներկայացած հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակը տրամադրում է հայտերի բացման նիստի օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:
28. Հանձնաժողովի անդամները հայտերի բացման նիստում որոշված ժամկետում, որը չի կարող պակաս լինել երեք աշխատանքային օրից, մրցույթի հրավերով սահմանված կարգով գնահատում են մրցույթի մասին հայտերը և գնահատման թերթիկներում համապատասխան նշումներ կատարելու միջոցով մրցութային առաջարկների վերաբերյալ եզրակացություն են տալիս ու ստորագրում և հայտերի բացման նիստում որոշված ժամկետում քարտուղարին են փոխանցում գնահատման թերթիկների մեկական օրինակները:
29. Ներկայացված հայտերի բովանդակությանը ծանոթանալու ընթացքում հանձնաժողովն իրավունք ունի առաջարկել մրցույթի մասնակցին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ՝ առավել ամբողջական կարծիքի ձևավորման նպատակով:
30. Հայտերի գնահատումն իրականացվում է Հրավերի հավելված 2-ով նախատեսված գնահատման չափանիշներին համապատասխան:
31. Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի կողմից ստանում է առավելագույն գնահատական:
32. Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ նիստում՝ հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա:
33. Հանձնաժողովն ընդունում է որոշում մրցույթին մասնակցած այն կազմակերպության (կազմակերպությունների) ցանկը հաստատելու մասին, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման պայմանագիր և այն կազմակերպության (կազմակերպությունների) մասին, որի հետ չի կարող կնքվել նման պայմանագիր:

34. Մրցույթում հաղթող ճանաչված հայտատուի ներկայացրած միջոցառման իրականացման ծրագիրն ու ծախսերի նախահաշիվը (հավելված 3՝ օրինակելի ձև) ներառվում են նրա հետ կնքվող պայմանագրում:
35. Պայմանագրի նախագիծը ներկայացված է հավելված 4-ում:
36. Մրցույթը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ոչ մի հայտ չի ներկայացվել, պայմանագիր չի կնքվում կամ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի նախագահը չի հաստատում հանձնաժողովի որոշումը:
37. Հանձնաժողովի որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահը սույն հրավերի 33-րդ կետում նշված հանձնաժողովի որոշումը ներկայացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի նախագահին՝ հաստատման:
38. ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի նախագահը սույն հրավերի 33-րդ կետում նշված որոշումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է այն:
39. ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի նախագահի կողմից հանձնաժողովի որոշումը հաստատվելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի նախագիծը տրամադրվում է այն կազմակերպությանը (կազմակերպություններին), որի հետ պետք է կնքվի պայմանագիր: Կազմակերպությունը պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է իր կողմից հաստատված պայմանագրի երկու օրինակը, կազմակերպության կողմից հաստատված պայմանագրի օրինակները ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատվում է դրանք և մեկ օրինակը նույն օրը վերադարձնում պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությանը: Եթե կազմակերպությունը սույն կետով սահմանված ժամկետում չի հաստատում և ներկայացնում պայմանագիրը, ապա նա զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:
40. Դրամաշնորհի հատկացման պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում պայմանագիր կնքած կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային www.mineconomy.am կայքէջում

հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ա Յ Տ

Զբոսաշրջության զարգացման 2021 թվականի («Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը») ծրագրի միջոցառումների իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերում նախատեսված

_____ միջոցառման իրականացման համար
(միջոցառման անվանում)
կազմակերպության ընտրության մրցույթին մասնակցության

Հայտատու կազմակերպության անվանումը_____

_____

Հասցե _____
Հեռախոս _____
Էլ. հասցե _____

Պետական գրանցման համարը _____

Կից ներկայացվող փաստաթղթերը_____
_____
_____
_____
_____

Էջերի ընդհանուր քանակը _____

Հայտի ներկայացման ամսաթիվը ------ / ----------2021 թ.

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____

Կ.Տ.
(կնիքի առկայության դեպքում)

հավելված 2

ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի փետրվարի 5-ի Զբոսաշրջության զարգացման «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2021 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N104-Ա հրամանի N2 հավելվածով նախատեսված

միջոցառումների իրականացման համար կազմակերպության ընտրության մրցույթին ներկայացրած հայտերի գնահատումը կատարվում է ըստ հետևյալ չափանիշների՝

Հ/Հ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	ԳՆԱՀԱՏՈՒՄ նվազագույն/ առավելագույն
1	Ներկայացված ծրագիրը հիմնավորված է, համապատասխանում է սահմանված նպատակներին և առաջնահերթություններին	10-20
2	Ծրագրի խնդիրները հասանելի, չափելի ու իրատեսական են և համապատասխանում են դրված նպատակներին, ծրագրի պլանավորումն իրատեսական է և հնարավոր է դարձնում դրված խնդիրների իրականացումը	10-25
3	Նախանշված է ծրագրի ազդեցությունը, իրատեսական շարունակելիության ձևը և (կամ) կայունության ապահովման մեխանիզմները	10-15
4	Ապահովված են ծրագրի առավելագույն տեսանելիության և արդյունքների տարածման մեխանիզմները	10-15
5	Ծրագիրը համահունչ է մասնակցի կանոնադրական նպատակներին և խնդիրներին	10-15
6	Ծրագրում ներգրավվող աշխատանքային ռեսուրսների մասնագիտական փորձառությունը բավարար է ծրագրի նպատակները և խնդիրներն իրականացնելու համար	10-20

Սույն գնահատման կարգին համապատասխան անցողիկ է համարվում 60 և ավելի միավոր ստացած կազմակերպությունը, որը որևէ չափանիշով չի ստացել նվազագույն գնահատականից ցածր գնահատական, և որի հայտի ընդհանուր գնահատականը առավելագույնն է մյուս հայտերի ընդհանուր գնահատականների համեմատությամբ:

Հավելված 3

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

(օրինակելի ձև)

NN	Միջոցառում		քանակ			այդ թվում

		Չափի միավոր		Միավորի գին	Ընդամենը ֆինանսական միջոցներ	ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները	Այլ աղբյուրներից հատկացվելիք գումարները
1.							
2.							
	Ընդամենը						
	այդ թվում ԱԱՀ						
	Ընդամենը						

հավելված 4

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

դրամաշնորհի տրամադրման

(օրինակելի ձև)

ք. Երևան ----- ---------- **2021թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս _____, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ---------- (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս ----------ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ **Կողմեր)**, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի փետրվարի 5-ի N104-Ա հրամանի Զբոսաշրջության զարգացման 2021 թվականի («Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը») ծրագրի միջոցառումների (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով՝ կնքեցին սույն նախնական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև _____ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:
2.4.9. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:
2.4.10. Սույն Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում իրականացվելիք միջոցառումների որակի և պայմանագրով նախատեսված ժամկետների պահպանման համար:

5.2 Կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված իրականացվելիք միջոցառումների ժամկետների խախտման դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ իրականացվելիք միջոցառման ենթակա, սակայն չիրականացված գնի 0,05 (զրո

ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ.

5.3 Պայմանագրի 1.2 կետում նշված միջոցառումներին չհամապատասխանելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև իրականացվելիք միջոցառումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից այդ չընդունվելու դեպքում: ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կազմակերպության վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7.Վեճերի լուծման կարգը

7.1. Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է.:

9.2 Պայմանագիր կնքած կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած կազմակերպությունը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Ծրագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

9.4. Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից, N1 ու N2 հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե Հասցե՝ Հասցեն 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյանի 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն h/h 900011010379 ՀՎՀՀ 02698604 Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար ՄԱՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ	Հասցե՝
---	---
Կ.Տ.	Կ.Տ